ՆՈՐ-ԴԱՐ

№ 120 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ 22 Յուլիսի **1888** Ուրբաթ 22 Յուլիսի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 120

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր. 50 կ., Հատով 5 կոպէկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութիւն հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բաւին 2 կ., թերթիկների համար կրկնապատիկ։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

«Նոր-Դար»-ին բաժանորդ գրվում են Թիֆլիսում ՄԻՄԻԱՅՆ խմբագրատանը, Գօլօվինսկի պրօսպեկտ, Զուբալօվի տանը, քաղաքային կլուբին կից։

Մահայուզակ կամ մի որ և է յայտարարութիւն, «Նոր-Դար»-ի մէջ տպելու համար, ընդունվում է միմիայն խմբագրատանը։ Զանազան գործակալների միջոցով ուղարկուած յայտարարութիւնները չեն ընդունվիլ, ըստ որում խմբագրութիւնս ոչ մէկ գործակալութեան հետ կապակցութիւն չունի և նրանց ջիջումն անել կարող չէ։

Խմբագրութիւնս խնդրում է Թիւրքիայի ինչպէս և Կ. Պօլսի, նոյնպէս Պարսկաստանի և Թաւրիզի և այլ հեռաւոր տեղերի այն բաժանորդներից, որոնք դեռ չեն վճարել ինչպէս անցեալ, նոյնպէս և դրկայ տարուայ բաժանորդագինը, բարեհաճեն ուղարկելու։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Քրոնիկոն. — Լուրեր։ Նամակ խմբագրին։ Մեր դպրոցների տեսչութիւնը։ Ուղեւորութիւն (շարուն.)։
Թղթակցութիւններ.—Դաւալու։
Քաղաքական. — Քաղաքական լուրեր։
Խառն լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրներ։
Յայտարարութիւններ։

Նորին Մեծութիւն Կայսրուհի Մարիա Ֆեդօրովնայի ծննդեան տօնի պատճառով վաղը՝ շաբաթ, յուլիսի 23-ին, համար չի լինիլ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Նախընթաց համարներից մէկում յայտնել էինք, որ պ. Սեդրակ Մանդինեանցը արձակուրդին Թիֆլիս մընալով, մինչև օգոստոսի 15-ը պէտք է էջմիածնում լինի, ուր կազմուելու է վերջնականապէս մեր դպրոցների համար հանգամանքներին յարմարեցրած մի ծրագիր։ Էջմիածնից ստացած հեռագրի համաձայն, պ. Սեդրակ Մանդինեանցը ձգելով անմիջապէս Թիֆլիսը, այժմ արդէն գտնվում է էջմիածնում։

—

ՕԴԵՍՍԱՑԻՑ.— Օդեսայի համալսարանի հայ ուսանողների թիւն այս տարի 10 էր։ Սրանցից 3-ը գանձակեցի են, 1-ը՝ շուշեցի, 1-ը՝ ախալցխացի, 1-ը՝ երևանցի, 1-ը՝ Դաւալու գիւղից, 1-ը՝ Թիֆլիսեցի, 1-ը՝ քութայիսեցի և 1-ը բեսարաբիացի։ Այս տարը ուսանողներից եօթը գանվում են իրաւաբանական բաժնում, 1-ը լեզուագիտական, 1-ը բնագիտական, 1-ը մաթեմատիկական բաժիններում։ Սրանցից աւարտել են այս տարի պ. Գաբրիէլ Մնացականեանց (դաւալուեցի) և Պ. Օհանեսեանց (քութայիսեցի) երկուսն էլ իրաւաբան։

—

ՇՈՒՇՈՒՑ.— Մինչև Թուով Հաշուելով Ղարաբաղի հայ գիւղերի Թիւը հասնում է 200-ի. նրանց մէջ կան աւաններ և բազմամարդ գիւղեր՝ ամեն մէկը 2, 3, 4, 500 տուն ժողովրդով։ Ցաւալի է տեսնել այսքան գիւղերի զաւակներին առանց ուսման, տգիտութեան խաւարում խարխափելիս։ Վերջին անգամ մեր ուսումնարանների դռների բանալուց գէսը երեք

ուսումնարան միայն ունինք։ Մնացած գիւղերի վրայ մտածող և հոգ տանող չկայ, Թէպէտև ժողովուրդը պատրաստ է հոգալու բոլոր ծախքերը, և քանի՛ քանիցս պիտել է ս. Առաջնորդին...։

—Մի տգեղ սովորութիւն, որ մինչև այսօր գոյութիւն ունի մեր մէջ, այդ քաղաքիս նամակատարի մի բարձր տեղ կանգնելն ու ահագին գոչումով նամակների հասցէները կարդալն է։ Եթէ նամակ կամ լրագրի տէրը երկու երեք օրով թափառանայ չը գալս գայ, չը պէտքէ ստանայ իւր անունով ուղղած ծրարը։ Նամակատարը միայն մի երու տան և Շահզադէի Թղթերն է անձամբ տանում իրենց յանձնում. միւսների տեղը Թոփխանան է։ Ինչու՞ երկու երեք Թղթատար չը պահել 6—7 հազար տուն ունեցող Շուշու մէջ, միւս քաղաքների նման, որ իսկոյն նամակներն և լրագրերը ցրուեն ժողովուրդի մէջ։

Անցեալ օր Ագուլեաց եկեղեցում հոգեհանգիստ կատարեցին քաղաքացի մի քանի բարեգործ հանգուցեալների համար, որոնք իրենց կենդանութեան ժամանակ չեն մոռացել ազգի զաւակների կրթութեան գործը—մասն և բաժին են հանել իրենց ունեցածից քաղաքիս երկսեռ դպրոցների օգտին։ Վերջին ժամանակներս կարծես շուշեցիք չեն հետևում իրենց վաղամեռիկ համաքաղաքացիների օրինակին։ Նրանք միշտ առատ են նուիրաբերութեան մէջ, միայն եթէ մի փոչ քարոզող, յորդորող ունենան։

Դեռ խՀուղու շինութիւնը շարունակվում է։ սրա վրայ զարհեալ բանում է և կը բանէ ժողովուրդը։ Գիւղացիք տարուայ հնձից զրկուելով հանդերձ՝ պարտաւորուած են տանել այս ծանր կոռ-բէկառը։ Ի դէպ յիշում ենք այստեղ մի դէպք, որ տեղի ունեցաւ անցեալներում գիւղացիների մէջ խՀուղու շինութեան գործում։—ԽՀուղու վերակացուն ստիպում է գիւղացիներին աշնան ցուրտ օրերին խՀուղու մօտ գիշերել, որ առաւօտը վաղ գործի կենան. գիւղացիները ընդիմանում են, յայտնելով, որ ցրտերից նրանք կարող են հիւանդանալ։ Վերակացուն պահանջում է ամեն մէկից 10 կոպ. (200 մարդ), որպէս զի կարող լինի նրանց բաց Թողնել. իսկ գիւղացիները չեն տալիս, և....փառաւոր կերպով ծեծում վերակացուին։ Վերջնոյս բողոքը հասնում է գաւառապետին, որ արձանագրութիւն կազմելով՝ գիւղացիներին դատաստանի է տալիս։ Դատաւորը գործը քննելով անիրաւ է համարում վերակացուի արածը և գիւղացիներին արդարացնում է։

—

Այս օրերս Բաթումի վրայով Թիֆլիս կը հասնի Բրիւսսէլ քաղաքի բէլգիական-Թագաւորական աշխարհագրական ընկերութեան նախագահ պ. Ժիւլ Լէկլէրկը (Jules Leclercg)։ Բէլգիայի ճանապարհորդը հետաքրքրվում է մեր երկրով և մտագրութիւն ունի գնալ Էջմիածին և Մասիս լեռը մօտիկից տեսնել և ուսումնասիրել։

Իբրև աշխարհագրական ընկերութեան նախագահ՝ պ. Լէկլէրկը հետաքրքրվում է հայերի գրականութեամբ, անցեալով ու ներկայով։ Արդէն նա հայերի մասին գաղափար ունի կազմած այն մի երկու բանախօսութիւնից, որ արել էր անցեալ տարի Բրիւսսէլում հեղինակի հրատարակչական ընտրագէտ Բրիւսարին։

—

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐԻՑ մեզ գրում են, որ այնտեղի հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանում հայոց լեզուի դասատանդութիւնը շատ Թոյլ է լինում, չնայելով, որ ուսուցչի համար լաւ ռոճիկ է նշանակուած։ Բարեկեանան Լուսնակութիւն է ներկայացնում Թէ աշակերտների և Թէ մանաւանդ ուսուցչի լեզուն։ Ուսումնարանն ահա քանի տարի է գտնվում է Թոյլ հսկողութեան տակ, իսկ ուսուցիչն էլ բոլորովին անկարող անձն է ուսուցչութեան համար։ Գաղթականների համար հարկաւոր են մի փոքր աւելի զարգացած, մի փոքր աւելի լաւ կոչման համապատասխան անձն. իսկ իրենց ներկայ դրութեամբ ուսումնարանի գոյութիւնը բոլորովին անօգուտ է դառնում՝ Թէև կարելի էր նրան լաւ կարգի բերել։ Քննութիւնների մասին կարելի էր խօսել շատ և շատ բան, բայց որովհետև «Նոր-Դար»-ը այդ մասին լրութիւն է պահում սովորաբար, մենք և կարևոր ենք համարում լռել։

—

ՇՈՒՇՈՒՑ.—Դարձեալ տգէտ տիրապետների տուրը երևաց մեր քաղաքում։ Մէկի համար, ս. Սինոդը բաց է ասել ինչ-ինչ յարգելի պատճառներով, այժմ դարձեալ խնդիր է ալբտրտում ժողովրդի մէջ նրան քահանայացնելու համար։ Ղազանչեցոց եկեղեցին այս րոպէին եօթը քահանայութեան թեկնածուներ ունի. սեղից վեր կենողը խնդիր է առաջարկում ժողովրդին, և... ժողովուրդը լաւ Թէ համաձայնում է։ Ինչ են մտածում արդեօք այդ մարդիկ. մտածում են, որ գրանով խնամութեան զոհ են անում ժողովրդի բարոյական և հոգևոր առաջադիմութեան գործը, որի զեկը կոլըգիալական տալիս են տգէտ, հնամոլ տամուրՀինների ձեռքը։

—Տակաւին անունը լսում ենք, երբեսը չենք տեսնում. այսինքն ոչ նրա մէջ նշանակած գինն ենք իմանում շատ անգամ և ոչ նոյն գնով ապրանք առնում։ Աւելի խիստ հղծվում է մսի տակասն, որն ամեն օր ժողովրդի խոստակցութեան առարկայ է լինում. տակասն պատերից կախում են Թէ չէ, իսկոյն մսագործները սկսում են. շատ անգամ հինց կախարած Թողնելով մուշտարու առաջ՝ յամառութեամբ ասում են՝ «փունտը 6 կոպ. է նշանակած, ես 8-ով եմ ծախում, սարսիդ (ձեռնոց) չէ, մի առնիր»։ Եւ նրանց այս խօսքը առաջ է գնում։ Մինչ մինջոց չկայ սրա առաջն առնելու։

—

Յուլիսի 20-ին երեկոյեան Թիֆլիսի ժողովարանում անդամների մի ընդհանուր ժողով կայացաւ։ Այդ ժողովը մի կողմից հետաքրքրական է։ ժողովարանի անդամներից մինը վիճելով նոյն ժողովարանի գործավարի հետ, նրան մի ապտակ էր տուել և փոխարէնը՝ մի երկուսը ստացել։

Այդ երեկոյեան անդամների ընդհանուր ժողովը հրաւիրուած էր ժողովարանի կառավարիչներից քննելու այդ գործը, այլապէս քուէարկութեամբ ժողովարանի անդամակցութիւնից դուրս ձգելու յափտեան պ. Մ.-ին, որ Թոյլ էր տուել իրեն ժողովարանում ապտակելու գործավարին։ Վիճաբանութիւնը բաւականին երկարատև էր և աւելորդ ենք համարում այստեղ համառօտակի մէջ բերել նրա բովանդակութիւնը։ Բայց այսքանը նկատեցնենք, որ մեր Թիֆլիսի ժողովարանը շատ մեծ գաղափար ունի ապտակի վրայ։

Անդամներից մէկը՝ պ. Ի. Խաչատուրեան առաջարկում էր, կամ Թողնել անդամ Մ.-ի գործի քննութիւնը կամ քննել նրա գործը գործավարի վարմունքի հետ, քանի որ երկու հոգի միմեանց հետ կռուելով և միմեանց ապտակելով, մէկի վարմունքը միւսի հետ անմիջական կապ ունի և կարելի չէ բաժանել միմեանցից։ Իսկ դրա հակառակ ժողովարանի կառավարիչները պնդում էին, որ գործավարը ժողովարանի անդամ չը լինելով՝ այլ ռոճիկով գործավարի պաշտօն վարելով, նրա արարքը քննելու և այն էլ անդամ Մ.-ի արարքի հետ քննելու իրաւունք չկայ, հակառակ է ժողովարանի կանոնադրութեան և այլն։ Այսպիսով գործավարը անմատչելի էր դառնում և բոլոր մեղքը ծանրանում էր անդամ Մ.-ի վզին։ Այս մասին բաւականին դիմախօսութիւններ եղան և վերջապէս քուէարկութիւնը սկսուեցաւ։

Քուէատուփի վրայ գրուեցաւ ИСКЛЮЧИТЬ և ով ուզերէն չէ հասկանում նրա համար վրացերէն՝ *გამოყოფა* և не исключить, վրացերէն՝ *დაբჭა*, այսինքն անդամ Մ.-ին արձակինք, Թէ.—մնայ։

Քուէարկութիւնից յայտնուեցաւ, որ արձակելու համար 71 քուէ է տուած, իսկ մնալու համար՝ 23. որովհետև 100-ից աւելի անդամ ձեռնպահ մնաց և կանոնադրութեան զօրութեամբ այդ 100 ձայնն էլ պէտք է աւելացնել 23-ի վրայ, ուրեմն պ. Մ.-ն մնում է—չէ գնում։

Այս վերջին հանգամանքի մասին էլ, ինչպէս երևում է, վէճ է բացուելու։

Կօքուրգը մնում է Թէ գնում,—դրբանով են զբաղուած Բալկանի վրայ։ Մեր ժողովարանն էլ այս շաբաթ կը զբաղուի այն հարցով Թէ՝ ժողովարանի անդամ Մ.-ն մնում է Թէ գնում է։

—

«Նոր-Դար»-ի մէջ մի քանի անգամ տեղեկութիւններ հաղորդուեցան, Թէ որպիսի անելանելի դրութեան մէջ է գտնվում Աղուէթեան դժբաղդ ու չքաւոր ընտանիքը որին օգնելու համար բացուած էր հանգանակութիւն։ Այժմ պ. Անուշաւան Աբովեանը հաղորդում է, որ այդ Թշուառ ընտանիքին փոքր ի շատէ օժանդակելու համար, յուսալով մեր ազգայինների բարեսրտութեան վրայ, տեղական հայոց դերասանական խումբը մի ներկայացում պիտի տայ կիրակի՝ յուլիսի 24-ին «Եւրոպա» այգում։ Կ'ներկայացնեն «Նկարիչներ», «Պիտոյն տկճորն» և «Վայ իմ կորած յիսուն ոսկի» պիեսները։ Անտրակտներում կածէ զինուորական եռաժշտական խումբը։

Ցոյս ունինք, որ մեր յարգելի հասարակութիւնը չի խնայել գէթ այսպիսի մինջոցով օգնելու յիշեալ կրեկցութեան արժանի ընտանիքին։

Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ Աբովեանցի կօշկեղէնի խանութում, Դվորցովայա փողոցի վրայ, իսկ ներկայացման օրը՝ Թատրոնի կասսայում—«Եւրոպա» այգում։

—

ԵՐԵՒԱՆԻՑ.—Կռիւներն ու անկարգութիւնները սովորական բաներ են, իսկ ոստիկանական հսկողութիւնն էլ Թոյլ է։ Այսպէս օրինակ, յուլիսի 16-ին, բազարի մէջ, երկու հայեր միմեանց հետ կռուեցին և նրանցից մէկը զայրացած՝ հանեց գրպանից փոքր դաշոյնը և խփեց իւր հակառակորդին. ողորմելին Թէև չմեռաւ՝ բայց վէրքը շատ ծանր է։

—

Ներքին գործերի մինիստրութեանն տրուած յուլիսի 11-ի Բարձրագոյն հրամանով, Կովկասի գրաքննական ատեանի տեղական և արևելեան լե-

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ Ե ԿԱՐԾԻՔՆԵՐ

— 21 յունվ.

Ֆիֆիլը

Հետաքրքիր է, թե ինչպես է կարողանում «Մշակ»-ի պատասխանատուն ամեն անգամ ինչ-որ նոր ձևով ներկայացնել Ֆիֆիլի հերյուրանքները։ Այս անգամ նա ստիպված է եղել ընդունել, որ Ֆիֆիլը ոչ մի ապացույց չի բերել իր ասածների ճշտության մասին, որ նա ամեն ինչ հորինել է, բայց միևնույն ժամանակ նա ուզում է ինքն էլ ինչ-որ բան հորինել, որպեսզի ընթերցողները կարծեն, թե «Մշակ»-ը ևս ինչ-որ բան ունի ասելու։ Ահա թե ինչ է գրում այդ մասին «Մշակ»-ը 101 համարում. «Ֆիֆիլը չի ցանկանում հրապարակ իջնել և մեզ հետ բանավիճել։ Նա ասում է, թե մենք ինքներս ենք հորինել այն ամենը, ինչ նա գրել է մեր մասին։ Ֆիֆիլը չի ուզում հասկանալ, որ մենք ոչ թե հորինել ենք, այլ ստացել ենք տեղեկություններ, որոնք ստուգել ենք և հետո միայն գրել։ Ֆիֆիլը ասում է, թե մենք ինքներս ենք հորինել, որ Ֆիֆիլը ուզում է ամուսնանալ Ալեքսանդրապոլի մի հարուստ աղջկա հետ, որ նա ուզում է ամուսնանալ, որպեսզի օգտվի կնոջ հարստությունից, որ նա ուզում է ամուսնանալ, որպեսզի կարողանա ազատվել իր պարտքերից։ Ֆիֆիլը ասում է, թե մենք ինքներս ենք հորինել

*կանաբար շուտով կարողացան կալուածները ձեռք բերել և շուտով հարըստացան։ Կարնեցի գաղթականների կրած թշուառութիւնների մասին մենք արդէն գրել էինք։ *)։*

1854 թ. ռուս-թիւրքական պատերազմում Ղարսը պաշարուեցաւ ռուսաց զօրքերով։ Հայոց Թիւրքիից յետոյ Ղարսը կրկին մնաց Թիւրքերի ձեռքում։ **)

Տեսնելով, որ Ղարսի բերդը ռազմական տեսակէտից շատ մեծ նշանակութիւն ունի, 1829-ին Թիւրքերը հրաւիրեցին անգլիական երկրաչափներ և մասնագէտ հարտարապետներ և կատարելապէս նորոգեցին և ամրացրին Ղարսի բերդը և աշտարակները։ Անգլիացիները բացի նորոգելուց մի քանի ամրոցներ էլ շինեցին յարմարաւոր տեղերում։ 1877 թ. ապրիլ 12-ին ռուսաց զօրքը նորից անցաւ Ախուրեանը։ 1877 թ. նոյեմբերի 6-ին գրոհ տուեց Ղարսի անառիկ բերդի վրայ։ Լոռու Մելիքեանին, Լազարեանին, Ալխազեանի և այլ հերոսների անձնազոհութիւնը չի պուր չգնաց և 6-ն նոյեմբերի 1877 թ. Ղարսի ամրոցի վրայ ծածանվում էր ռուսական դրօշը։

Նոյեմբերի 7-ին Ն. Կ. Բ. Մեծ Իշ. Միխայէլ Նիկոլայևիչը հանդիսաւոր մուտք գործեց Ղարս։

Ջ.

Ղարս քաղաքի տեսքը.—Ռահ գետը.—Կամուրջները.—Ուխտատեղիները։

—

Ղարս մտնողն առաջին անգամ կը նկատէ իսլամական մզկիթները, որոնց սրածայր գագաթները բարձրանում են դէպի երկինք, և որոնց շըքեղանկիները վրայ մօլլան փառաբանում է Իսլամի Աւետարը։ Մզկիթներից ոչ սակաւ հետաքրքիր է իսլամական գերեզմանոցները, որոնց բարձր անսաւ քարերը բարձր տնկած են նոյն իսկ քաղաքի կեդրոնում։ Անհոգ իսլամները շատ ներողամիտ աչքով են նայում և սառնասրտութեամբ տանում են իրենց գետնաբնակ եղբայրներից բուրող հոտը։ Փողոցները Ղարսում մեծ մասամբ ծուռ, նեղ և անկանոն են։ Փողոցները սալած են ամենակոպիտ կերպով, այնպէս որ սայլի անիւը մէկ քարից միւսն անցնելու համար պէտք է ընկնի խոր փոսի մէջ։ Այդ է պատճառը, որ Ղարսի մէջ կառք նստելը կատարեալ չարչարանք է։

Ղարսում տները մեծ մասամբ քարից են շինուած, և շատերը երկյարկանի են։ Շինութիւնները կանոնաւոր և կարգով շինած չլինելու պատճառով, դրանք կարծես իրար վրայ են շարուած։

Ղարսի տեսքը գեղնցիկ է գիշեր ժամանակ, երբ հազարաւոր կրակներ ամեն տեղից կարծես մխեանց վրայ շարուած՝ բարձրանում են դէպի երկինք։ Այժմ սկսել են փողոցները լայնացնել և կանոնաւորել։

Ղարսին փոքր ինչ չգեղութիւն տուողն անկասկած կարկաչահոս գետն է, որ իւր օձապտոյտ հոսանքով կիսում է քաղաքը երկու մաս՝ արևելեան և արևմտեան։

Գետը, որ սովորաբար կոչվում է «Ղարս-չայ», իւր սկիզբն առնում է Սողանլուի անտառի վտակներից և ընդունելով իւր մէջ մի քանի մանր ջրեր, դառնում է հեզհեզիկ գետ, այցելում է Ղարս՝ մատակարարելով նրան խմելու ջուր, անցնում է դէպի հիւսիս-արևելք, և Ղեղամ գիւղի մօտ խառնվում է Ախուրեանին և յետոյ թափվում Արաքսի մէջ։

Թէ ինչ անուն էր կրում հնում «Ղարս-չայը»—այդ մինչև այսօր դեռ չէ պարզաբանած։ Մեր պատմագիրներից յայտնի է, որ Վանանդ և Շիրակ գաւառների մէջ կան երկու գետեր՝ Ռահ և Ախուրեան՝ թէ մեր նախահայրերն որին Ռահ էին ասում և որին Ախուրեան, այդ հարցը, ինչպէս ասացինք, դեռ լուսաբանած չէ և դեռ մութ մնում է։ Վենետկում հրատարակուած Հայաստանի քարտէզների մէջ հին Ախուրեանն ընդունում են այժմեան Արփաչայը, ուրեմն և Ռահ գետի տեղ Ղարս-չայը։

Ս. Ասողիկ պատմելով Արգինայի մասին՝ ասում է—«Շիննեաց զկաթողիկէն յեզերս Ախուրեան գետոյ...» Եթէ իրօք Արգինայի գետը Ախուրեան պէտք է համարել, անտարակոյս Ղարս-չայը Ախուրեանն է, որովհետև Արգինայի միջից անցնող գետը—Ղարս-չայն է։

Հ. Մ. Ջամչեանը խօսելով Հայկի Թորն շիրակեցիների նահապետ Շարայի մասին, Մովսէս Խորենացուց և Ցովհաննէս կաթողիկոսից առնելով գրում է.—

«Եղեն Արամայեսայ որդիք բազումք, յորոց միոքն էր Շարայ անուն այր հզօր, չատակեր և բազմածին յոյժ, որոյ վասն որոշեալ զնա Արամայես այլոց որդոց իւրոց—առաքեաց հանդերձ աղխիւքն ի գաշտ մի մօտաւոր արգաւանդ և բերրի, ընդ որ գնային ջուրքն այն է գետն կոչեցեալ Ախուրեան»։ *)

Այստեղից պարզ երևում է, որ Շարան բնակուեցաւ Շիրակի մէջ, որտեղ է Ախուրեանը,—բայց ոչ Վանանդ գաւառում, որտեղ է Ռահ գետը։

Նոյն Մ. Ջամչեանն իւր Զ գլխում ծանօթութեան մէջ գրում է. «Ախուրեան գետ, այն է Ղարսայ գետ, սա անցեալ աշխարհն Վանանդ անկանի ընդասս»։ **) Իսկ Արփաչայի մասին գրում է. «Ռահ գետ, այն է Արփաչայ ելանէ ի սահմանացն Արագածու, և խառնի յԱխուրեան գետ, մօտ ի Խոշա-Վանք»։ ***)

Մեր բոլոր ազգային աշխարհագրութեան գասագրքերի մէջ նախկին Ախուրեանի տեղ ընդունուած է այժմեան Արփաչայը, իսկ Ռահ գետի տեղ—Ղարս-չայը։

Ռուս մատենագիրներն, որ վերջին ժամանակներումս հետաքրքրուել են Ղարսի անցեալով—Ղարս-չայը ընդունում են նախկին Ռահ գետը։

Ինչպէս վերևն ասացինք, գետն իւր հոսանքով Ղարս քաղաքը կիսում է երկու մասի՝ արևելեան և արևմտեան։ Այդ քաղաքամասերը իրար հետ հաղորդակցութիւն ունին կամուրջներով։ Կամուրջները չորս են։ Առաջին կամուրջն է կեդրոնականը, որ քաղաքի կեդրոնումն է շինուած. այս կամուրջը շինուած է քարից փայտածածք։ ****)

Բ. կամուրջն է բերդի դրան առաջ քարաշէնք, սրբատաշ և հոյակապ։ Այս կամուրջը շինուած է IX-րդ դարի վերջերում Հայոց Աշոտ Գ Թագաւորի օրով։ Այս կամուրջը միացնում է Հայոց Ջուխուր և Գամատն աստուած Թագերը Թիւրքերի Թագերի և բազարի հետ։ Կամրջի վրայ կայ արձանագրութիւն, բայց այժմ եղծուած է։

Կան նաև երկու այլ կամուրջներ, բայց այդ կամուրջները ծառայում են միայն մարտկոցների և աշտարակների երթևեկութեան համար։ Այս կամուրջները քարաշէն են, կամուրջներից քիչ հեռու կայ մի աղբիւր, որ ուխտատեղի է հայ կանանց համար։ Այս ուխտատեղին ասւում է «Մխանձունք»։ Տարուայ Հանդիսաւոր օրերին դարսեցի հայ կինը ազատուելով փակ կեանքից—«էյրամը» *) գլխին առած դուրս է գալիս «օր ու արև» տեսնելու, զբօսնելու և ուխտ անելու։ Վարդավառին, Աստուածածնի և Ս. Խաչի տօներին «Մխանձունքի» դաշտը լցուած է լինում հայ-կանանց խմբերով։ «Մխանձունքի» ուխտատեղու մասին աւանդութիւն կայ, թէ այդտեղ են նահատակուած երեք կոյսեր, որոնք Թողնելով աշխարհի վայելչութիւնները, եկած կրօնաւորական կեանք էին անցկացնում և հանապազօր աղօթքով փառաբանում էին Տիրոջը, երբ սէլճուկ Թաթարները լըցուեցան Ղարս, կոտորեցին Ղարսի բնակիչներին և ընդհանուր կոտորած ժամանակ սպանեցին նաև այդ երեք կոյսերը։ Այդ օրից աղօթատեղին սուրբ Մխանձունք և կոյսերի արիւն Թափած տեղից դուրս եկաւ այդ գեղեցիկ աղբիւրը, որ մինչև այսօր զովացնում է ծարաւ Ճանապարհորդին։

Շերակեցի

(Կը շարունակուի)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴԱՒԱԼՈՒ, 16 յուլիսի.—Դաւալուս գիւղն գտնվում է Վեդի-բասար գաւառում և ունի մօտաւորապէս 500 տուն հայադաւան բնակիչ։ Գիւղի դիրքը դաշտային է, որը նպաստաւոր է երկրագործութեան և այգեգործութեան համար։

Դաւալուեցիները գաղթականներ են Պարսկաստանից, ինչպէս պատմում էին ծերունիները։ Գիւղացիները, բոլորը, առանց բացառութեան, ունին իրենց սեպհական վարելահողերն և այգիները։

Գիւղի օդը բաւական է, ջուրը առողջարար է, բայց սակաւ։ Դաւալուի արտերն առատում է վեդի-չայ գետը, որ ամառ ժամանակ բոլորովին նուազում է. գիւղացիների արդիւնաբերած մթերքներն են գլխաւորապէս ցորեն, բամբակ և մասնաւորապէս գարի և չալթուկ (բրինձ)։

Ընդհանրապէս վերցրած և համեմատած հարևան գիւղերի հետ, Դաւալուն թէ նիւթականապէս և թէ տնտեսականապէս ապահովուած է, իսկ դաւալուեցիները էլ աշխատասէր և գործունեայ մարդիկ են։

Դաւալուն իւր գոյութեան սկզբից մինչև այժմ չէ ունեցել ուսումնական, բայց և այնպէս բաւական թուով ուսումնականները է տուել. ներկայումս ունի մօտ տասը համալսարանականներ, ունի մի պրօֆէսսոր։ Կան և մի քանի հոգի պետերբուրգում բոլոր բնակիչների կողմից եղած սերբալիր ընդունելութեան մասին տեղեկութիւնները հաղորդելով։ Իսկ ինչ վերաբերում է այդ ուղևորութեան քաղաքական հեռանկարներին, «National Zeitung»-ը նկատում է, որ «Բերլինի բարձր շրջաններում տարածուած են լաւ լուրեր և ակնկալութիւններ, սակայն դրականապէս այստեղ էլ ոչինչ չգիտեն, միայն են-թադրում են, որ այս անկեղծ տեսակցութիւնն կազդէ և երկու կառավարութիւնների յարաբերութիւնների վրայ»։

—Գերմանական լրագիրները հերքում են այն լուրը, թէ իբր թէ գրաֆ Հերբէրտ Բիսմարկը շուտով ուղևորելու է Ֆրիդրիխսրուհէ, իւր հօր հետ տեսակցելու համար։

—Կայսրուհին Պոտսդամում աջողութեամբ ազատուել է երկունքից և ծնել է տղայ։

—Ո՛չ մի կիսապաշտօնական թերթ դեռ իւր կարծիքը չէ յայտնել երկու կայսրների Պետերհօֆում կայացրած տեսակցութեան առիթով.—գերմանական ամբողջը մամուլը բաւականանում է միայն հանդէսների մասին և գերմանական կայսրին Պետերբուրգում բոլոր բնակիչների կողմից եղած սիրալիր ընդունելութեան մասին տեղեկութիւնները հաղորդելով։ Իսկ ինչ վերաբերում է այդ ուղևորութեան քաղաքական հեռանկարներին, «National Zeitung»-ը նկատում է, որ «Բերլինի բարձր շրջաններում տարածուած են լաւ լուրեր և ակնկալութիւններ, սակայն դրականապէս այստեղ էլ ոչինչ չգիտեն, միայն են-թադրում են, որ այս անկեղծ տեսակցութիւնն կազդէ և երկու կառավարութիւնների յարաբերութիւնների վրայ»։

—Գերմանական լրագիրները հերքում են այն լուրը, թէ իբր թէ գրաֆ Հերբէրտ Բիսմարկը ուղևորելու է Պարիզ Ֆրանսիական կառավարութեան առաջարկելու, որ նա զինադադար լինի։ Այդ լուրը հերքում է և «Nordd. Allg. Zeitung» թերթը, որ ևս. Բիսմարկի օրգանն է համարվում։

—Բերլինի «Kreuz-Zeitung»-ի ստացած տեղեկութիւնների նայելով, Անգլիան դիմելու է Թիւրքիային մի յայտագրով, որի մէջ պիտի բողոքէ Տիգրիս և Եփրատ գետերի գծով բերդեր շինելու դէմ։ Ասում են, որ եթէ այս յայտագիրն ի նկատի չառնուի, Անգլիան պէտք է այդ casus belliէ համարէ։

ԱԻՍՏՐԻԱ-ՈՒՆԳԱՐԻԱ.— Վեննայից ստացուած լուրերի ն նայելով, ուն գարական մինիստր-նախագահ Տիսսան-շուտով ուղևորելու է Կարլսբադ՝ բժիշկների խորհրդով. այնտեղ է գնալու շուտով, ինչպէս հաղորդեցին Թերթերը, և Հաբսբուրգի կայսրութեան արտաքին գործերի մինիստր գր. Կայլնոկին և իտալական մինիստր-նախագահ Կրիսպին։ Ըստ ամենայն հաւանականութեան երկու դաշնակից պետութիւնների այդ պետական երեք անձերի մէջ կարլսբադում տեղի կունենայ մտքերի և կարծիքների փոխանակութիւն հերթական քաղաքական խնդիրների մասին։

—Գեներալ-մարշալատ էրցհերցոգ Ալբրէխտը հիւր է գնում գրաֆ Կայլնոկիի մօտ, ուր անցկացնելու է բաւական երկար ժամանակ։

—Ֆէլդցէյխմայստէր բարոն Կուն, որին Ֆրանց-Յոզէֆ կայսրն արձակել է իւր պաշտօնից, Գրացում, զօ մինիկեան զօրանոցի առաջ զօրահանդէսի միջոցին մնաս բարեաւ արեց զօրքին. նա գովեց այդ գունդը և ցանկութիւն յայտնեց, որ իրեն աջողուէը ականատես լինելու, Թէ ինչպէս այդ զօրքերը պատերազմի դաշտում պիտի հըբաւկուեն իրենց գործերով։ Ինքը գեներալը զգում է, որ իւր ֆիզիքական և հոգեկան ոյժերը իրեն Թոյլ կը տան իրեն այդպիսի ցանկութիւն արտայայտելուն։

—Յուլիսի 13-ին, ի պատիւ բարոն Կունի 500-ից աւելի սպաների կողմից տրուած Ճաշի վրայ առաջարկուեց Կունի կենացը, որի մէջ յայտարարում էին, որ Կունը միշտ բարձր է պահել գիտութեան դրօշակը և Բադէկցու նման, ինչպէս պատերազմի դաշտում, նոյնպէս և զօրախաղերի միջոցին, գլխաւոր սկըզբունք է ընդունում յարձակումը։ Պատասխանելով իւր կենաց բաժակին, ֆէլդցէյխմայստէր Կունն յիշեցրեց, որ կուստոցէի մօտ վարած պատերազմի մէջ երկու Թնդանօթներ, առանց ո և է պաշտպանութեան դիմադրեցին ամբողջ գունդի դէմ և նպաստեցին յաղթանակը տանելուն։ 1859 Թուին նա ինքն է կամեցել նախ անցնել Պօ գետը, բայց նրան այդ Թոյլ չեն տուել, իսկ կեօնիգգրէց մօտ եթէ հետևողուն յարձակում գործէին, յաղթութիւնը աւստրիացիների կողմը կը լինէր։ Այդ Ճառն այնպիսի ոգևորութիւն պատճառեց, որ սպաները կունին ձեռքի վրայ տարան դուրս և կառքի ձիերը հեռացնելով, իրենք լծուեցան և նրան տարան տուն։

ԱՄԵՐԻԿԱ.—Ջնկաֆօի ոստիկանութիւնն անցեալները յանկարծուստ խուզարկութիւն է արել մի կասկածելի տան մէջ և գտել է ուժանակի 12 ռումբեր, մի ատրճանակ, մի դաշոյն։ Այդ տանն ապրող երեք մարդիկ ձերբակալուած են։ Ոստիկանական տեսուչ Բօնֆիլդը, որի կարգադրութեամբ էր եղել խուզարկութիւնները, Հաւատացնում է, որ իւր ստացած տեղեկութիւնների նայելով, դաւադրութիւն կար կազմուած դատաւոր Գէրի, դատաւոր Տրիննէլի և երեն դէմ։ Բացի այնպիսի ոգևորութիւն պատճառից, որ սպաները կունին ձեռքի վրայ տարան դուրս և կառքի ձիերը հեռացնելով, իրենք լծուեցան և նրան տարան տուն։

ԱՄԵՐԻԿԱ.—Ջնկաֆօի ոստիկանութիւնն անցեալները յանկարծուստ խուզարկութիւն է արել մի կասկածելի տան մէջ և գտել է ուժանակի 12 ռումբեր, մի ատրճանակ, մի դաշոյն։ Այդ տանն ապրող երեք մարդիկ ձերբակալուած են։ Ոստիկանական տեսուչ Բօնֆիլդը, որի կարգադրութեամբ էր եղել խուզարկութիւնները, Հաւատացնում է, որ իւր ստացած տեղեկութիւնների նայելով, դաւադրութիւն կար կազմուած դատաւոր Գէրի, դատաւոր Տրիննէլի և երեն դէմ։ Բացի այնչականներ, այդ դաւադրութեանզօրութեամբ, խուզարկութեան օրը պէտք է ձերբակալուած լինէին դատաւորները, ոստիկանութեան տեսչի և ուրիշ անձերի տները։ Հասարակական աշխատութեան դեպարտամէնտիչինութիւնը, դատարանը և ուրիշ շատ պաշտօնական հաստատութիւնները պէտք է օդ Թուչէին, ինչպէս և մի քանի խմբագրատներ։ Ձերբակալութիւնները եղել են և շատերը խոստովանել

*) Տես «Նոր-Դար»-ի 1886 Թ. № 110։

**) Տես «Кавказскій Календарь» 1886, երես 175։

*) Մովսէս Խորենացի գիրք Ա, գլուխ Բ.

**) Հ. Մ. Ջամչեան Պատմ. Հայոց գիրք Ա., գլ. Դ.

***) Նոյնը—գիրք Ջ, երես 180.

****) Այս կամուրջը 1886 Թ. մայիսի 7 փուլ եկաւ, բարեբաղդաբար վնաս չպատճառեց։

*) «Էյրամը» բրդից մանուած Թափանցիկ քող է, որովհետև ծածկվում են հայ կանայք դուրս գնալիս։

են իրենց բանականքը։ Ոմանք ասոնցմով ուզում էին վրէժխնդիր լինել լիշեալ անձերին այն պատասվճռի համար, որով մի քանի ոչնչականներ անցեալները մահուան էին պատապարտուած։

ԲՕԼՂԱՐԻԱ.—«Daily Telegraph»-ի Պեսերբուրգի Թղթակիցը գրում է, որ ներկայումս ամենևին երկիւղ չկայ, որ Ռուսիան կը մեկնամտի բոլղարական գործերին, որովհետև բոլորն էլ համոզուած են, որ պրինց Ֆերդինանդը ինքը կամաւ կը հեռանայ Բոլղարիայից։ Հաւատացնում են, որ Գերմանիան ալիսնպատակ Ռուսիայի Թեկնածուի աջողութեանը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Յուլիսի 3-ին Ֆիումէ հասաւ ամերիկեան «Queenstouon» նաւը ոսկանգ առաւ նաւահանգստում։ Հետևեալ օրը նաւապետն իւր մեծ, գեղեցիկ, անգլիական ցեղի շան ուղեկցութեամբ գնաց քաղաք և սկսեց փողոցներում շրջագայել։ Շունն առանց ցուկակապի էր։ Կանկարծ մօտեցաւ մի մարդ, որի պարապմունքն էր քերթել սատկած անասուններն, պատռանը ձգեց շան վիզը և սկսեց իւր հետևից քաշել։ Շունն աշխատում էր կապից ազատուել։ Շան և մարդու կռիւը մի քանի րոպէ տևեց։ Նաւապետն այդ ժամանակ անվրդով դիտում էր։ Վերջապէս ձանձրանալով, նա իւր ձեռնափայտը ծռլը ձգեց։ Շունն խոյն ձգուեցաւ ջուրը, քաշելով իւր հետևից թեղէ քերթողին, որը, չսպասելով, որ գործն այդպիսի ելք կունենայ, չկարողացաւ պարանը հատ անել, որի մի ծայրով շան վիզն էր կապել, իսկ միւսով՝ իւր մարմինը։ Քանի որ մարդը ըզաւում և օդնութեան էր կանչում, շունը լողալով հասաւ փայտին, ատամներով վերցրեց փայտը և յետոյ, քերթողին էլ իւր հետևից քաշելով, բերաւ իւր տիրոջը։ Թեղէ մարդն շատապեց պարանը ձգել և՝ մեծ զուարճութիւն անցորդների, բոլորովին թրջուած, վախեցած, շնչակէտ վազեց դէպի տուն։

***Լօնդօնում անցեալները տեղեկին «Կարմէն»օպերայի տասնամեակը։ Կարմէնի դերը կատարում էր դերասանուհի Մինննի Գաուէի, որին համակրական մեծ ցոյցեր արեցին։ Այդ երեկոյեան նա ի միջի այլոց, Լօնդոնի բաժը դասակարգի կանանց կոշիկից ստացաւ մի ամրոզջապէս ոսկեայ պսակ՝ բիւրեղեայ արկղիկի մէջ զետադած. արկղիկի չորս կողմը փորագրուած են նուիրաբերող կանանց անունները։ Մինննի Գուէին այդ գիշեր 350 երբորդ անգամն էր, որ կատարում էր Կարմէնի դերը։

***Ֆրանսիական Լիլլ քաղաքում մի պարոն Ֆրանսիական բանկի բաժնից գնելով 29 հատ 1000 ֆրանկանոց արժեթղթեր, այրել է համրերը հաւաքելուց յետոյ՝ կազմել է տալիս արձանագրութիւն՝ բանկի տեսչի և ուրիշների ներկայութեամբ։ Այդ վարմունքի պատճառն այն է, որ մի կին այդ պարոնին մեղադրում է երբ թէ նա իւր արկղիկից հանել և այրել է մի քանի կաբևոր թղթեր, որոնց մէջ եղել են 29 հատ 1000 ֆրանկանոց արժեթղթեր։ Պարոնը իւր վրայ բարդուած մեղադրանքը երանից վերցնելու համար, այրում է յետոյ 29 արժեթղթերը և յանձնում է մասնագէտների քննութեան, որպէս զի համեմատելով այդ մոխիրը նմանների հետ պարզուի ճշմարտութիւնը։

*** Մօտերքս վենետիկում փորձեցին ձագարի նեարդը պատուաստել մարդի նեարդի վրայ։ Փորձը բոլորովին աջող ելք ունեցաւ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ի

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յունիսի.—Հրատարակուած է՝—ձրիաբար մէկ ձեռքից միւսն անցնող կայքերի վրայ եղած տուրքի փոփոխութիւնը. ժառանգների խնդրելով՝ ժառանգութիւն ստացուած անշարժ կալքից հասանելիք տուրքը չեղուում է մինչև հինգ տարի ժամանակ՝ ամսական գանձարանին հատուցանելով $\frac{1}{2}$% իսկ շարժական կալքի համար տուրքի պահանջը չեղուում է մինչև մի տարի առանց $\frac{1}{2}$% վճարելու։ Հրատարակուած է դրուագաւոր թղթերի տուրքի փոփոխութիւնը։ Հրատարակուած են՝—եթէ բնակարան վարձելու միջոցին վճարը չէ անցնում տարեկան 500 րուբլուց, ենթարկվում է 80 կ. տուրքի. այն պայմանագիրները, որոնց մէջ թէև ժամանակամիջոցը չէ յայտնուած, բայց նշանակուած է տարեկանից պակաս վարձը, տուրք վճարվում է դրուագաւոր նիշով ինչպէս պայմանագիրը կազմելու միջոցին, նոյնպէս էլ և պայմանագրի իրաքանչիւր տարին անցնելուց յետոյ։

Խմբագիր-Հրատարակիչ

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

SIROP DE RAIFORT IODÉ
DE GRIMAKLT & C-e
Pharmaciens à Paris
autorisè en Russie
ՐԷՖՕՐ ԻՕԴԷԻ ՍԻՐՕՊ
Պարիզի Դօկտօ և ընկ. Դեղագործառների

Այս դեղը գործածվում է քսան տարիէ ՝ի վեր երախաների հիւանդութիւնների դէմ ձկան լուղև և անտիսկօրպիք (противоцынготный) սիրօպի տեղ և նշանաւոր արդիւնքներ է տալիս։

Եթախտից վրդ այլևայլ ուռուցքները, խուլը, և մարմնի, գլխի և երեսի վրայ երևացած բազմատեսակ վէրքերը բժշկելու համար սրանից առաւել ազդու դեղ չկայ։ Մինչդոյն ժամանակ բժշկում է մարմնի մեզկութիւնն ու գունատութիւնը և տալիս է երախաներին լրիւ բնական գուարթութիւնն ու արիւնոտութիւնը։ Սա անգնահատ դեղ մէկ, ծծող երախայոց մարմնի և գլխի վրայ եղացած վէրքերը բժշկելու և արիւնը մաքրելու համար։

Վաճառվում է Պարիզ Վիվիէն փողոց № 8. տ
(М.) գ. 27—1

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ, որ ունի պետական ուսումնարանների ուսուցչի վկայական, կամենում է գաւառական քաղաքներում դասեր ունենալ Հայոց ուսումնարաններում ռուսաց լեզուից և ռուսաց պատմութիւնից ու աշխարհագրութիւնից։ Հասցէն՝ Телавъ. учителю Степану Ивановичу Теръ-Саркисянъ.

5—4

Ընդունում եմ ամեն տեսակ և ամեն լեզուներով յայտարարութիւններ առաջիկայ 1889 թուականի իմ կազմելիք «ՀԱՅՈՑ Օրացոյցի» Յաւելուածի բաժնում տպագրելու Համար։ Յայտարարութեան վճարը՝—տողը 16 կոպ.—38 կոպ. է։

Յանկացողները կարող են դիմել իմ գրախանութը, Թիֆլիսում, Մելքայէլեան կամուրջի վրայ №№ 29—30.

Մակար Զմշկեան։

5—3

ՊՕՍՏԱՅԻՆ ԿԱՌՔԵՐԻ

երթևեկութիւնը պատերազմական-վիճակի ձանապարհով

1888 թ. մայիսի 15-ից մինչև նոյեմբերի 15-ը։

Թիֆլիսից գնում է գալիս

Հինգ հոգու տեղ ունեցող կառքերը առաւօտեան ժամը 9-ին, Մէյլէթի կայարանում գիշերելով հասնում է Վլադիկավկազ միևս օրը երեկոյեան ժամը 8-ին։

Նոյնպէս գնում է գալիս առաւօտեան ժամը 7-ին. գիշերում է Գուդաուար կայարանում և Վլադիկավկազ հասնելով միևս օրը ցերեկուայ ժամը 5-ին։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսը գնում է գալիս ցերեկուայ ժամը 4-ին, առանց գիշերելու, միևս օրը, երեկոյեան ժամը 7-ին հասնում է Վլադիկավկազ։

Նոյնպէս գնում է գալիս Ճաշից յետոյ ժամը 5-ին և առանց Ճանապարհին գիշերելու Վլադիկավկազ հասնում է միևս օրը ժամը 8-ին երեկոյեան։

Վլադիկավկազից

Հինգ հոգու տեղ ունեցող կառքերը գնում են գալիս առաւօտ. ժամը 9-ին, գիշերում են Մէյլէթի կայարանում և միևս օրը երեկոյեան ժամը 8-ին հասնում են Թիֆլիս։

Նոյնպէս առաւօտեան ժամը 7-ին գնում են գալիս և գիշերելով Պասանաուր կայարանում, միևս օրը ժամը 6-ին երեկոյեան հասնում են Թիֆլիս։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսներ ևս գնում են գալիս ցերեկը, ժամը 4-ին Ճաշից յետոյ, առանց գիշերելու՝ միևս օրը երեկոյեան ժամը 9-ին հասնում են Թիֆլիս։

Նոյնպէս գնում են գալիս երեկոյեան ժամը 5-ին և առանց Ճանապարհին գիշերելու, միևս օրը հասնում են Թիֆլիս երեկոյեան ժամը 9-ից 50 ր. անց.

—

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Նոպհնաուային երթևեկութիւն Բաթում-Օդեսայի և Կ. Պոլսի միջև։

—

Բաթումից գնում է

Երեքշաբթիները.—Կէս օրից յետոյ ժամը 4-ին, ուղիղ գծով, մրցնում է Սուխումի և Նովոռոսիյսկի նաւահանգիստները։

Հինգշաբթիները.—Կէս օրուայ ժամը 4-ին, ուղիղ գծով, Նովոռոսիյսկի և Կերչի վրայով։

Շաբաթ օրերը.—Երեկոյեան 8 ժամերին, շրջանառու ընթացքով, բոլոր նաւահանգիստները պատահելով։

Երկուշաբթիները.—Երեկոյեան արտասահմանեան գնացքով Կ. Պոլիս։

Բաթումից գալիս է

Երկուշաբթի — Առաւօտ. Օդեսայից, ուղիղ գծով՝ Կերչի և Սուխումի վրայով։

Չորեքշաբթի — Առաւօտ Օդեսայից, ուղիղ գծով, Կերչի և Նովոռոսիյսկի վրայով։

Ուրբաթ. — Երեկոյեան, Օդեսայից, շրջանառու ընթացքով։

Կիրակի օրերը.—Առաւօտ Կ. Պոլսից։

Փոթիից գնում է Բաթում

Երեքշաբթիները. — Առաւօտեան ժամը 9-ին, Ղրիմ-Կովկասեան ուղղագիծ շոգենաւին միանալու, որ մտնում էն Սուխում։

Ուրբաթ—երեկոյեան կամ գիշերը, շրջանառու Ղրիմ-Կովկասեան Բաթում գնալու նաւը նաւահանգիստ դալուց յետոյ։

Շաբաթ օրերը. — Առ. ժամը 9-ին, Ղրիմ-Կովկասեան և Բումիլլա-Անատոլեան շրջանառու շոգենաւերին միանալու։

Բաթումից գնում է փոթի

Չորեքշաբթի և Կիրակի օրերը.—Նաւի դուրս գնալու ժամը որոշում է Բաթումի նաւային գործակալութիւնը՝ նաւը փոթիից գալուց յետոյ։

Բացի այդ, ամեն շաբաթ Օդեսայից Ղրիմ-Կովկասեան նաւահանգիստներից գալիս են փոթի որոշեալ ժամանակներում երթևեկող ապրանքա-ուղևոր-մարդատիկը նաւեր չորեքշաբթի օրերը, լուսաբացին, և գնում են ուրբաթ առաւօտները։ Նիկոլաևից Օդեսայի վրայով շաբաթ օրերը երեկոյեան Սեվաստօպոլ և Բաթում գալիս են նոյնպիսի նաւեր, որոնք փոթի գալիս են ուրբաթ լուսաբացին և հետևում է շաբաթ օրը երեկոյեան, վերադառնում է առանց Բաթում մտնելու Սեվաստօպոլն և Օդեսայի վրայով գալիս է չորեքշաբթի երեկոյեան։

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ, որ աւարտել է իւր ուսումը Թիֆլիսի Ալէքսանդրեան ուսուցչական ինստիտուտում և մի քանի տարի վարել է ուսուցչական պաշտօն Հայոց ծխական-եկեղեցական դպրոցներում, ցանկանում է դասեր ունենալ նոյնպիսի դպրոցներում։ Կարող է դասախօսել ռուսաց լեզու, թուաբանութիւն, ռուսաց պատմութիւն, աշխարհագրութիւն, նկարչութիւն ու վայելչագրութիւն։

Պայմանների մասին դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան.

6—1

№ 4.

ԿԵՕԼԷՐԵԱՆ ԽԻՆԱՅԻ ՋՈՒՐ

գլխի թէկփոկը ոչնչացնելու և մազերը ամրացնելու Համար։
Վաճառվում է գաւառներում բոլոր փոքր և չատէ նշանաւոր առևտրականների մօտ, իսկ Մոսկվայում—
Ր. ԿԵՕԼԷՐԻ և ԸՆԿ. մօտ, Նիկօլսկայա փողոցում։
(М. 46,209) 3—1

ՀԱՐԿԱՒՈՐ Է մի վարժուհի, որ կարողանայ Հայոց եկեղեցական-ծխական օրիորդական դպրոցում ռուսաց լեզու դասախօսել։ Հասցէն իմանալ «Նոր-Դար»-ի խմբագրատանը.

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Ուղիղ և կանոնաւոր երթևեկութիւն Մարսէյլի և Բաթումի մէջ։

Հինգշաբթի, օգոստոսի 4-ին, «ԱՐՄԵՆԻԱ» (Armenie) շոգենաւը, նաւապետ «ԳԱՐՐԻԳ» (Garrigues) դուրս կը գայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսօն, Կ. Պոլիս և Մարսէյլ։

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան գործակալութեան Բաթումում՝ պ. ԴԱՐԱՆԻՕՆԻՆ, Թիֆլիսում՝ պ. ՐԷՆՕԻՆ, նախկին գալերէյա Արծրունիների № 103. 3—1

ՀԱՐԿԱՒՈՐ Է ԲՆԱԿԱՐԱՆ

որ բաղկացած լինի 6 կամ աւելի սենեակներից և գտնուի Գօլովինսկի պրօսպէկտի, Լօրիս-Մելիքեան և նրանց կից փողոցների վրայ։ Պայմանները յայտնել «Նոր-Դար»-ի խմբագրատանը։

Խոնարհաբար խնդրում եմ այն յարգելի անձերին, որոնք իմ հանգուցեալ ամուսին Աղէքսանդր Աբրահամեանի

«ԳԱԻԱՌԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ»

Դրքի համար բաժանորդներ գտնելու նեղութիւնը յանձն էին առել, բարեհաճեն ուղարկել ինձ բաժանորդագիրերի և դրամը, որպէս զի կարող լինենք տպագրելու բաժանորդների ազգանունները, որովհետև արդէն տպագրութիւնն աւարտվում է։

Հասցէն՝ Тифлисъ. Шушаникъ Арараты ану. Ѳоминая ул. № 15, д. Давришева.

(Ազ.) 5—2

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

ուզում է բնակարան ունենալ իւր բոլոր պիտոյքներով. նոյնպէս ճաշ. կարելի է և առանց ճաշի։ Բնակարանը պէտք է լինի Պրօսպէկտի մօտիկ փողոցներում։ Հասցէն «Նոր-Դար»-ի խմբագրատանը։

ՀԱՐԿԱՒՈՐ Է մի վարժուհի, որ կարողանայ դասախօսել Հայոց եկեղեցական-ծխական դպրոցում ռուսաց լեզու, գծագրութիւն և վայելչագրութիւն՝ շաբաթական 16 դաս. պայմանների մասին դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան։

№ 13.

ԿԵՕԼԷՐԵԱՆ ԿԱՇՈՒ ՆԵՐԿ

կաշու այս ներկով, որին կարող եմ առանց ընդհագովութեան գեբացանց անուանել, կարելի է շուտով և յարմար կերպով վակսե տեղ քսել՝ ոտնամաններ (մանաւանդ կանանցը), պայուսակներ, ձիու սարքեր, կառքեր և այլն, նրանց սև ու երկարատև փայլ տալու, նոյնպէս և կաշին անթրջելի և պինդ կացուցանելու համար։ Իւր օգտակար յատկութիւններով նա արժանի է գործադրութեան ամեն մի տնտեսութեան մէջ. հենց միայն այն, որ այս ներկը (ապրիշատուբա) գործադրելով կանանց ոտնամանների համար չէ կեղտոտում ներքին շորերը, արժանի է ուշադրութեան և նրան իրաւունք է տալիս ընդարձակ սարածութիւն ստանալու։ Սրուակները, չնայելով գնի էժանութեան, երկու անգամ մեծ են արտասահմանեան այսպէս ասուած «գլանց-լակ»-ից։

Վաճառվում է գաւառներում բոլոր փոքր և չատէ նշանաւոր առևտրականների մօտ, իսկ Մոսկվայում—
Ր. ԿԵՕԼԷՐԻ և ԸՆԿ. մօտ, Նիկօլսկայա փողոցում։
(М. 46,236) 3—1

ՂՈՒԲՈՒՅԻ ՀԱՅՈՑ ԵՐԿԴԱՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ համար հարկաւոր է մի ուսուցիչ ռուսաց և նոյն լեզուով աւանդելիք առարկաների համար։ Պայմանների մասին կարելի է դիմել Թիֆլիսում՝ «Նոր-Դար»-ի խմբագրատանը պ. Խաչատուր Փանեանցին, իսկ Ղուբա՝ տեղիս Հայոց ուսումնարանի հոգաբարձութեան իրենց պայմաններով։

5—2

Дозволено цензурою. Тифлисъ, 21-го Іюля 1888 г. Տպարան Կավկազ լրագրի գրասենեակի։ Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр., д. Читахова.